ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հոկտեմբերի 2020 թվականի №----Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի №448Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2020 թվականի սեպտեմբերի 22-ին «ՄՈԼԲԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 24 ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի №448Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Ստեփանավան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0568 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0568 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 14-ի №714Ա որոշմամբ ԼԷ №0568 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է 22 ամիս ժամկետով՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 15-ը:

գ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 81-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի վերականգնվող աղբյուրների և ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանման նպատակով էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը 2-րդ և յուրաքանչյուր հաջորդ անգամ երկարաձգվելու դեպքում երկարաձգվում է նախորդ երկարաձգման ժամկետից 2 ամիս պակաս ժամկետով, բացառությամբ Կարգի 81-րդ կետի 3-րդ, 4-րդ ենթակետերով և 81.1-րդ կետով նախատեսված դեպքերի,

դ) Կարգի 81-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համապատասխան՝ ԼԷ №0568 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը Ընկերության կողմից հայցվող 24 ամսվա փոխարեն կարող է երկարաձգվել 20 ամիս ժամկետով՝ նախորդ երկարաձգման 22 ամիս ժամկետից կրճատելով 2 ամիս,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Կարգը, այդ թվում՝ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Քսան ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի «ՄՈԼԲԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ստեփանավան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №448Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0568 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2020 թվականի հոկտեմբերի 15-ը» բառերը փոխարինելով «մինչև 2022 թվականի հունիսի 15-ը» բառերով:

2. Ընկերությանը՝ ԼԷ №0568 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով Կայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հունվարի 25-ի №01-69 գրությամբ ներկայացված №190554946 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 2 402 500 (երկու միլիոն չորս հարյուր երկու հազար հինգ հարյուր) դրամ գումարից 1 201 250 (մեկ միլիոն երկու հարյուր մեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամ դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2 402 500 (երկու միլիոն չորս հարյուր երկու հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2022 թվականի հուլիսի 30-ը գործողության ժամկետով:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հոկտեմբերի 15-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հոկտեմբերի 2020թ.